եւ զՔաղդեա[յ][1], որպէս Պտղոմէոսն ասէ: 219 Ունի գետ՝ զԵփրատա[յ][2] վտակս տասն[3] զաւրաւորս, յորոց եւ այլք յոլով բաժանին յարբուցումն երկրին ի սպառ՝ բա՛ց[4] ի չորից վտակաց, որք ուժով մնացեալ՝ երեքն անկանին[5] ի Դկղաթ[6] եւ մին՝ ի լիճ նորին. որք կոչին՝ մինն Սոր, միւսն՝ Սորիտ, միւսն ընդ մէջ Բաբելոնի անցանէ, եւ միւսն ասի Քութայիր, որք յիրեարս եկեալ՝ անցանեն յելից Ակաղաղի՝ բնակեալ բանակի Տաճկաց: 220 Բայց կարծեմ զայս վտակ, որ այժմ Քութայս անուանի՝ սա կոչել Աբեւդենա[յ][7] Ար-[31ա]մակաղէս, քանզի՝ «Առեալ զիշխանութիւն, ասէ[8], Նաբուգոդոնոսոր՝ զԲաբելոն պարսպէ երեքկին պատ[ո]ւարով[9] հնգետասան[10] աւր եւ զգետն Արմակաղէս յԱրածան[ւ]ո[յ][11] հանեալ տանէր եւ զջրհորն բարձրաւանդակին, որ առ Սիպարաց[ւ]ոց[12] քաղաքին՝ շուրջ փորեաց քառասուն[13] հրաս[ա]խ[14], եւ խորութիւն՝ քսան[15] գիրկ, եւ դուռնս[16] եդ, որք բանայցեն եւ զբնաւ դաշտ ոռոգեսցեն, եւ անուանս կոչեաց դրանցն՝ ᴺԵքետոգնոմոնաս[17], որպէս թէ՝ «Կամս ինչ ունիցին»»: 221 **Եւ է [Բասրա[18] ամենալից վաճառաւք եւ եկք նաւաց ի[19] Հնդկաց եւ յամենայն[20] կողմանց արեւելից:** 222 **Եւ է][21]** Բաբելոնի աշխարհ երկայն եւթն[22] մասն եւ երեք եւ կէս[23]՝ լայն: 223 Գտանի ի սահմանս նորա ակն սարդիոն, լինի անդ[24] եւ քռոսէ՛լիթոս[25], որ է ոսկէքարն: 224 Որ ասեն՝ հիացման արժանի է բան, եթէ՝ ամենայն գիշերատուի երկիցս բարձրանայ ջուր ի ծոցոյն Պարսկաց:

225 **Լ Գ.**[26] Աշխարհ [Անապատ Արաբիա է, յերի կալով[27] Միջագետաց ըստ հիւսիսոյ[28], յելից կալով Ապառաժ Արաբիոյ եւ ի մտից Խուժաստանի: 226 Եւ ունի Անապատ Արաբիա[29] ազգս ինն[30], բայց[31] լեառն եւ գետ՝ եւ[32] ոչ մի:

227 **Լ Դ.** [Աշխարհ]][33] Ասիո[յ] է Արաբիա Եդեմոն[34], որ է Երջանիկ, յերի կալով Անապատ

1 *V* զՔաղթեա *փխ* զՔաղդեայ (*վեր. Սուքրեանի. տե՛ս բանաւոր* **Դ → Թ → Դ**)

2 *V* զԵփրատո, *S* զԵփրատու *փխ* զԵփրատա[յ] (*վեր.՝ ըստ այլոց, տե՛ս նախ. Ե.190, 191, 213*)

3 *V* ծ̄

4 *VS* բայց *փխ* բա՛ց (*վեր.*)

5 *VS* անգանին *փխ* անկանին (*վեր.՝ ըստ այլոց, օր.՝ նախ. Ե.58, 307*)

6 *VS* Դկլաթ *փխ* Դկղաթ (*վեր.՝ ըստ Ե.130, 212*)

7 *V* Աբեւթենա, *S* Աբիւթենայ *փխ* Աբեւդենա[յ] (*վեր.*, =Աբիւդենոսի. *տե՛ս բարբառային* **Դ → Թ**)

8 *S* ասէ, զիշխանութիւն *փխ* զիշխանութիւն, ասէ (*V. վերջին* ասէ *բառը փորձել են մաքրել եւ փոխարէնը ուշ ձեռագրով գրել են այն* զիշխանութիւն *բառից առաջ՝ տողավերեւում, կայծակնաձեւ նշանների մէջ*)

9 *V* պատուարով *փխ* պատուարով (*վեր. Սուքրեանի*)

10 *V* ե̄ժ̄

11 *V* յԱրածանո *փխ* յԱրածանւոյ (*վեր. Սուքրեանի՝ ըստ այլոց, տե՛ս նախ. Բ.30, Գ.54, Ե.324*)

12 *V* Սիպարացոց *փխ* Սիպարացւոց (*վեր. Սուքրեանի՝ ըստ այլոց, տե՛ս նախ. Բ.30, Գ.54, Ե.324*)

13 *V* խ̄

14 *V* հրասխ *փխ* հրասախ (*վեր. Սուքրեանի՝ ըստ այլոց, տե՛ս նախ. Ա.24, Զ.5*)

15 *V* ի̄

16 *S* դրուռնս *փխ* դուռնս (*V*)

17 *V* նեքետոգնոմոնաս, *S* Եգետոգնոմոնաս *փխ* ᴺԵքետոգնոմոնաս (*վեր.՝ ըստ Սուքրեանի՝* «Ըստ յոյն բառից» *ծնթ-մբ. տե՛ս* դրանցն – նԵքետո...)

18 *DPv* Պասրա *փխ* Բասրա (*AE. քաղաքանունը չենք փոխում երկրանուան ձեւով՝* Բծրա)

19 *AE չիք* ի (*DPv*)

20 *AE* ամենայն *փխ* յամենայն (*DPv*)

21 *VS չիք* Բասրա ամենալից ... Եւ է (*3 տող*) (*վեր.՝ ըստ համառօտի. տե՛ս* **Եւ է ... Եւ է**)

22 *V* է̄, *S* եօթն *փխ* եւթն (*վեր.՝ ըստ Ա.8, Բ.10, 16, 18*)

23 *V* գ̄c (*c-աձեւ նշանը նոյն պատուոյ նշանի տակ է*)

24 *V* անտ *փխ* անդ (*վեր. Սուքրեանի. համմտ. Գ.27, 58, 73, Դ.13, 32, Ե.16, 20 եւն*)

25 *S* քռոսելիթիս *փխ* քռոսեւլիթոս (*V. գրուած է* քռոս և լիթոս. =քռոսիւլիթոս)

26 *V* լ̄, *S* ԻԸ. *փխ* Լ Գ. (*վեր.՝ ըստ համառօտի*)

27 *DPv* յերի կայ *փխ* է, յերի կալով (*AE*)

28 *AE* հիւսիւսի, *D* հիւսւսոյ *փխ* հիւսիսոյ (*Pv*)

29 *DPv չիք* Անապատ Արաբիա (*AE*)

30 *D* ազգ մի *փխ* ազգս ինն (*AEPv*)

31 *DPv չիք* բայց (*AE*)

32 *ADE չիք* եւ (*Pv*)

33 *ADEPv չիք* Աշխարհ (*վեր.՝ ըստ V-ի միւս գլխասկիզբների*) / *VS չիք* Անապատ Արաբիա ... Լ Դ. Աշխարհ (*6 տող*) (*պայմանական վեր.՝ ըստ համառօտի. տե՛ս* **Լ Գ. Աշխարհ ... Լ Դ. Աշխարհ**)

34 *S* Եւդեմոն *փխ* Եդեմոն (*V. Սուքրեանի տողատակի ծանօթագրութիւնն է՝* «Յօր. *Եդեմոն*»)